

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ճանաչելու մասին

25-ը դեկտեմբերի, 2018թ.

ք.Երևան

ՀՀ հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերի քննիչ Խ.Մեջլումյանս, ուսումնասիրելով վարույթիս թիվ 62229018 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝


Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքերի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված և քննվող թիվ 62229018 քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննելու Էդուարդ Սեդրակի Սարգսյանին, ով հայերեն գրավոր լեզվին չի տիրապետում, կարողանում է գրել և կարդալ միայն ռուսերեն լեզվով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

Սույն քրեական գործով «ՖԻՆԼՈՈ» ՍՊԸ աշխատակից Արթուր Սամվելի Մովսիսյանին ճանաչել թարգմանիչ, նրան հայտնել սույն որոշման մասին և բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները:


ՀՀ հատուկ քննչական ծառայության
հատկապես կարևոր գործերի քննիչ՝



Խ.Մեջլումյան

Ծանոթացա որոշմանը:

25.12.2018թ



Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

«22»-ը դեկտեմբերի 2017թ.

քաղ. Երևան

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Մարգարյանս, վերանայելով վարույթիս թիվ 62237117 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով քննվող թիվ 62237117 քրեական գործով տուժող Կոռնել Կոնստանտին Ռոմիկայի Ստենգաչուն, չի տիրապետում դատավարության լեզվին, տիրապետում է ռումիներեն գրավոր և բանավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ սույն գործով տուժող Կոռնել Կոնստանտին Ռոմիկայի Ստենգաչուն չի տիրապետում դատավարության լեզվին, անհրաժեշտ է ռումիներեն լեզվի թարգմանություն կատարել, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Վարույթիս թիվ 62237117 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «Ֆինլոու» ՍՊ ընկերության կողմից լիազորված թարգմանիչ, Իգոր Նիկոլանիչ Անիսիմովին, որի մասին հայտնել նրան:

ՀԿԳ քննիչ՝

Գ. Մարգարյան

Որոշումն ինձ հայտված է

«22» 19 2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Քրեական գործին թարգմանիչ մասնակից դարձնելու մասին

3 դեկտեմբերի, 2017թ.

ք. Երևան

«Հ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Վ. Ավետիսյանս. քննարկելով թիվ 61204317 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով վկա Իվան Գրիգորյանը ոչ ապավարար չափով է տիրապետում հայերեն գրավոր լեզվին, նրա մասնակցությամբ քննչական գործողություն կատարելու նպատակով անհրաժեշտ է քրեական գործին մասնակից դարձնել հայերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին տիրապետող թարգմանչի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հ քրեական դատավարության տեղնսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Որպես թարգմանիչ՝ սույն քրեական գործին մասնակից դարձնել հայերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին տիրապետող Ծովինար Խոսրովի Թորոսյանին, նրան պարզաբանել իր իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Հ քրեական տեղնսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Որոշումը ծանոթացնել թարգմանիչ Ծ. Թորոսյանին:

Վարչության պետի տեղակալ՝

Վ. Ավետիսյան

Ծանոթացա որոշմանը, իմ իրավունքներն ու պարտականություններն ինձ պարզաբանվել են, ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Հ քրեական տեղնսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացվել եմ:

Թարգմանիչ՝

Ծ. Թորոսյան

19.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Թարգման ճանաչելու մասին

« 27 » օգոստոսի, 2018թ.

քաղաք Երևան

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ- ավագ քննիչ՝ Ժ.Թովմասյան, քննարկելով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննչական խմբի կազմում քննվող թիվ 62202608 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ջ Ե Ց Ի

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող թիվ 62202608 քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել հարցաքննելու վկա Կառլեն Մանուչարյանին:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ վկա Կառլեն Համբարձումի Մանուչարյանը խուլ ու համր է:

Քրեական գործով հացաքննելու համար անհրաժեշտ է ճանաչել թարգմանիչ, ով ազատորեն տիրապետում է խուլ ու համրերի ժեշտեր լեզվին, իսկ որպես այդպիսին հանդիսանում է Սիրանուշ Նիկոլի Մալխասյանը:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Թիվ 62202608 քրեական գործով որպես ժեշտերի լեզվի թագմանիչ ճանաչել « *Յիճ/Մա* » ՍՊԸ-ի թարգամ Սիրանուշ Մալխասյանին:

2. Սիրանուշ Մալխասյանին պարգաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀՀ հատուկ քննչական ծառայության
հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ



Ժ.Թովմասյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

